**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

2019թ. դեկտեմբերի 26 N 168

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼՈՒՍԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հաշվի առնելով** Լ. Մկրտչյանի՝ 25.12.2019թ. ՀՀ Արագածոտնի մարզպետին ներկայացված գրավոր բացատրությունը, Լ. Մկրտչյանի՝ 16.12.2019թ. թիվ 120 հրամանը և 18.12.2019թ. թիվ 121 հրամանը, ինչպես նաև ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ Ռ.Նալբանդյանի 26.12.2019թ. զեկուցագիրը,

**հիմք ընդունելով** 2019թ. նոյեմբերի 19-ից ուժի մեջ մտած թիվ ԱՐԱԴ/2210/02/18 քաղաքացիական գործով կայացված վճիռը և ՀՀ Արագածոտնի մարզպետի՝ 26.12.2019թ. 136 որոշումը,

**ղեկավարվելով** ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 224, 226 ը 227-րդ հոդվածների պահանջներով՝

***կարգադրում եմ՝***

Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Բյուրականի Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լուսինե Մկրտչյանին հայտարարել նկատողություն:

X Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713